

ՀՈԳԵԳԱՅԻՄՍԷՆ ԵՏՔ ՎԵՃԵՐՈՒՊ ԿԻՐԱԿԻ

22 ՅՈՒՆԻՍ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Արդարութիւն եւ Իրաւունք (Բ)	Էջ 2
Ներողութիւն	Էջ 3
Յովհաննէս Մկրտիչի Քարոզութիւնը	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ
(3.1-11)

Ահաւասիկ, Երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի զրկէ իրենց զօրութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն: Այլ պիտի չունենան ո՛չ յաղթ, կտրիճ ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ ու երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն ճարտարապետ եւ ո՛չ ալ ճարպիկ կախարդ: Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քմահաճոյքը պիտի ըլլայ անոնց իշխանը: Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերը պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանքով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ

Արդարին ըսէ՛ք՝ թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ:

ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագնելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար”:

Երուսաղէմը լքուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին: Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ. Սողոմոնացիներուն

պէս իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին: Արդարին ըսէ՛ք՝ թէ բարի է իր վերջը, որովհետեւ իր գործերուն պտուղը պիտի վայելէ: Բայց վա՛յ անօրէնին. չար պիտի ըլլայ անոր վերջը, որովհետեւ իր գործած չարիքները իրեն պիտի դառնան:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(11.13-24)

Զեզի՛ հեթանոսներուդ կ’ըսեմ. հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեւով ազգակիցներուս նախանձր գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:

Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են, կը նշանակէ թէ ճիւղերն ալ Աստուծոյ նուիրուած են: Ճիշդ է որ այդ ճիւղերէն ոմանք կտրուեցան, եւ դուն որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեր կտրած ճիւղերը. մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրադ: Հիմա պիտի ըսես. “Աստուած այդ ճիւղերը կտրեց զի՛ս պատուաստելու համար”: Իրաւ է. անոնք՝ հրեաները կտրուեցան՝ որովհետեւ չհաւատացին, եւ դուն՝ հեթանոսդ, հաւատալուդ

մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները քու վրադ:

համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ վախցի՛ր: Որովհետեւ եթէ Աստուած բուն ճիւղերուն չխնայեց, թերեւս քեզի երբեք չխնայէ:

Տե՛ս թէ ո՛րքան բարի է Աստուած եւ խիստ միաժամանակ: Խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ եւ բարի՝ քեզի հանդէպ, պայմանաւ որ շարունակես անոր բարութեան արժանի մնալ. այլապէս դո՛ւն ալ պիտի կտրուիս: Նոյնպէս ալ, եթէ հրեաները թողուն իրենց անհաւատութիւնը, կրկին պիտի պատուաստուին արմատին վրայ, որովհետեւ Աստուած կրնայ զանոնք վերստին պատուաստել: Եթէ դուն, որ իսկականին մէջ վայրի ձիթենի մըն էիր, կտրուեցար եւ պատուաստուեցար ընտանի ձիթենիին վրայ որ քու բունդ չէր, ո՛րքան աւելի դիւրութեամբ պիտի պատուաստուին նոյն այդ ձիթենիին բնական ճիւղերը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(14.13-21)**

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամալի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն: Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, գլծաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամալի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու:» Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դո՛ւք տուէք անոնց ուտելիքը»: Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ

Բոլորն ալ կերան ու կշտացան.

հաց է եւ երկու ձուկէ»: Յիսուս ըսաւ. «Հո՛ւս բերէք ատոնք»: Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակառ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

**ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏԷՆ ԵՏՔ Զ. ԿԻՐԱԿԻ
(ԾԻԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 22)
ԻԲ**

**ԿԻՐԱԿԻ ՅԱՐՈՒԹԵԱՆ
I**

ԱՌՊԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՐԱՌԻՒՄ (Բ)

Անցեալ անգամ գրած էի իրաւունքի Աստուածաշնչական հասկացողութեան մասին: Իսկ հիմա պիտի ներկայացնեմ արդարութիւնը:

Աստուածաշունչը ինչպէ՞ս տեսած է արդարութիւնը: Ի՞նչ է արդարութիւնը, ըստ Ս. Գիրքին:

Բ.- Արդարութիւնը:

Ինչպէս իրաւունքին ծագումը Աստուծոյ մէջ է, նոյնպէս է արդարութեան ծագումը: Աստուածաշունչին համար արդարութիւնը անանջատելի է Աստուծմէ. ոչ թէ միայն որովհետեւ Աստուած Ինք արդար է եւ արդարութիւնը կը սիրէ (հմմտ Սղ 11.7), այլ նաեւ՝ որովհետեւ Ինքն է, որ իր տաճարին մէջ արժանի դարձնելու եւ իր սուրբ լերան վրայ բնակեցնելու համար անձ մը՝ կը պատուիրէ արդարութիւն գործել (հմմտ Սղ 15.1-2), այլ բացատրութեամբ մը՝ որպէսզի մէկը Աստուծոյ ներկայութեան ըլլայ՝ արդարութիւն գործելու ճամբուն վրայ պէտք է ըլլայ: Բայց ի՞նչ կը նշանակէ արդարութիւն գործել: Նախքան այս հարցումին պատասխանը, տեսնենք թէ՛ Աստուծոյ արդարութիւնը ինչպէ՞ս հասկցուած է:

որպէսզի մէկը Աստուծոյ ներկայութեան ըլլայ՝ արդարութիւն գործելու ճամբուն վրայ պէտք է ըլլայ:

Հին Կտակարանին մէջ Աստուած բազմիցս «արդար» կոչուած է: Նոյնիսկ Յոբի Գիրքին մէջ: Ծանօթ է, որ Յոբ «կատարեալ ու արդար եւ աստուածավախ էր ու չարութենէ ետ կը քաշուէր» (Յբ 1.1), սակայն Աստուած թոյլ տուաւ, որ Չարը զայն ահաւոր փորձութիւններու ենթարկէ: Բայց «Տէրը Յոբին վերջը՝ առաջինէն աւելի օրհնեց», կ'ըսէ իմաստութեան այս գիրքը: Աստուծոյ արդարութեան լայն հասկացողութիւն մը կարելի է հանել Յոբի Գիրքէն: Ըստ այս իմաստութեան, Աստուծոյ արդարութիւնը առնչուած է Անոր հետեւեալ յատկանիշներուն.

- 1.- Ամենատես եւ ամենակարող գիտութեան (38.3բ-4 եւ այլն):
- 2.- Մաքրութեան (4.17):
- 3.- Ամենօրեայ տիեզերական խնամատարութեան (38.12):
- 4.- Հզօրութեան եւ ամենահասութեան (40.9):
- 5.- Վստահութեան՝ իր ծառաներու հաւատքի եւ բարոյական հաւատարմութեան վրայ (1.8):

6.- Պաշտպանութեան անոնց անձերուն (1.12):

7.- Քաջալերողութեան (40.7):

8.- Համբերատարութեան (գիրքին գրեթէ վերջաւորութեան կը պատասխանէ Յոբի տրտունջքին): Եւ

9.- Վերականգնողութեան (42.10, 12):

Արդ, Աստուծոյ արդարութիւնը տիեզերքին եւ յատկապէս մարդկութեան հետ իր յարաբերութեան ուղղութիւնն է եւ փրկութիւն պարգեւող կատարումը:

Որպէսզի իր արդարութիւնը մարդկային կեանքին մէջ գործէ, Աստուած կը պատուիրէ իւրաքանչիւր անհատի. «Արդարութեան, միայն արդարութեան հետեւիր, որպէսզի ողջ մնաս եւ քու Աստուծոյ քեզի տալիք երկիրը ժառանգես» (Բ. Օր 16.20): Բայց ինչպէ՞ս կրնայ մարդ էակը արդարութեան հետեւիլ: Ինչպէ՞ս գիտնայ, թէ ինք իրապէս արդարութեան կը հետեւի կամ արդարութիւն կը գործէ: Առականերու Գիրքը կ'ըսէ, թէ արդարութեան կանոնները իմաստութենէն կու գան (Հմմտ Առ 8.15): Հետեւաբար, արդարութիւնը Օրէնքին գործադրութեան մէջ չէ: Օրէնքին տարրերը գործադրելով չէ, որ մէկը արդար կ'ըլլայ: Օրինակ Աբրահամի ժամանակ Օրէնքը չկար, բայց Աբրահամ արդար տեսնուեցաւ Աստուծոյ աչքին (Հմմտ Ծն 15.6), որովհետեւ հաւատաց Տիրոջ (նոյն): Արդարին վերջը բարի է, կ'ըսէ Եսայի մարգարէ (Ես 3.10):

Արդարութիւնը Օրէնքին ենթակայ չէ, որովհետեւ անիկա իմաստութենէն կու գայ: Եւ իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, ինչպէս կ'ըսէ Առականերու Գիրքը (Հմմտ Առ 1.7): Արդար ըլլալը կամ արդարութիւն գործելը Օրէնքը գիտնալէն չի գար, այլ Աստուծոյ երկիւղէն: Ասիկա չի նշանակեր, թէ Աստուածաշունչը Օրէնքին կարեւորութիւնն չի տար: Օրէնքը շատ կարեւոր է, բայց աւելի կարեւոր է արդարութիւնը: Մինչ Օրէնքը թէեւ Աստուծմէ տրուած՝ սակայն անձին հաւատքի փորձառութենէն անջատ միջոց մըն է, արդարութիւնը անմիջականօրէն կապուած է մարդ էակի ներքին իրականութեան, Աստուծոյ հետ անոր կենդանի փոխյարաբերութենէն կը բխի: Ընդ այս տրամաբանութեամբ է, որ Նոր Կտակարանին մէջ արդարութիւնը նոր նշանակութեամբ մը շարունակեց բանալի գաղափար մը մնալ:

Նախքան Նոր Կտակարանի արդարութեան հասկացողութեան անցնիլս, Հին Կտակարանը ինչպէ՞ս կը տեսնէ արդարութեան հետեւիլը կամ գործելը.

1.- Տիրոջ ճամբուն մէջ ըլլալ (Ծն 18.19).

2.- Անոր պատուիրանները զգուշութեամբ գործադրել (Բ. Օր 6.25).

3.- Ըստ 11-րդ Սաղմոսին՝ Տիրոջ ապաւինիլ, սիրտը շիտակ պահել, բռնութիւնը չսիրել. եւ այլն:

Յիսուսի համար՝ Յովհաննէս Մկրտիչ եղաւ «արդար կեանքի մը ճամբան» ցոյց տուող (Մտ 21.32): Մատթէոսի աւետարանէն գիտենք, որ Մկրտիչի քարոզութեան գլխաւոր նիւթը ապաշխարութիւնն էր: Ան ապաշխարութիւն քարոզեց, որովհետեւ Երկինքի արքայութիւնը մօտեցած է, կ'ըսէր: Ուրեմն, ըստ Յիսուսի «արդար կեանքի մը ճամբան»՝ ապաշխարութեան ճամբան էր: Իսկ «ապաշխարութիւն» ըսելով ի՞նչ կը հասկնար Յովհաննէս Մկրտիչ եւ ի՞նչ կը հասկնար Յիսուս: Ըստ առաջինին, անիկա ընթացք մըն էր Տիրոջ ճամբան պատրաստելու կամ Անոր գալստեան պատրաստ ըլլալու: Ըստ Յիսուսի, անիկա էպէս զԱստուած ընդունիլ էր իբր Հայր, Անոր արքայութիւնը տենչալ եւ

Անոր կամքին հնազանդիլ էր, Անոր հետ ամենօրեայ հաղորդութեան մէջ ըլլալ եւ յանցանքներու համար զղջալով՝ Անկէ ներում խնդրել էր, նաեւ ներել էր ուրիշներու յանցանքները, Անոր օգնութեան վստահելով փորձութիւններու դէմ պայքարիլ էր, եւ հաւատալ՝ թէ վախճանական յաղթանակը Աստուծոյ կը պատկանի:

Պօղոս առաքեալ մարդ էակին արդարացումը պիտի տեսնէր Քրիստոսի ինքնագոհաբերման մէջ: Այլ խօսքով՝ արդարութիւնը կու գար, ըստ իրեն, Քրիստոս-գոհէն (Ա. Կր 2.20-21) եւ անոր հանդէպ իր ունեցած հաւատքէն (Գղ 3.9): Համաձայն առաքեալին՝ Քրիստոս-գոհին «արդարութիւնը Աստուծմէ եկած արդարութիւնն է, հիմնուած հաւատքի վրայ» (նոյն):

Քրիստոնէական արդարութեան բարոյականը ի՞նչ է.

Չմեղանչել, այլ ըլլալ զգաստ, այսինքն՝ չօտարանալ Աստուծմէ: Ապրիլ մաքուր եւ աստուածապաշտ կեանք մը, «սպասելով եւ ջանալով փութացնել Տիրոջ օրուան գալուստը», երբ կատարեալ «արդարութիւնը պիտի իշխէ» (Բ. Պտ 3.11, 12, 13):

II

Օրուայ Ս. Գրային ընթերցումները. Եսայի Մարգարէէն՝ 3.1-11: Հռոմէացիներու Նամակէն՝ 11.13-24: Մատթէոսի Աւետարանէն՝ 14.13-21:

Առաջին ընթերցումը: Մարգարէութիւնը կը վերաբերի Երուսաղէմի լքուելուն եւ Հրէաստանի կործանումին: Այս աղէտին պատճառ ցոյց կը տրուի բնակիչներուն անօրէնութիւն խօսիլը, բարոյական

Ապրիլ մաքուր եւ աստուածապաշտ կեանք մը, «սպասելով եւ ջանալով փութացնել Տիրոջ օրուան գալուստը»...

Արդար ըլլալը կամ արդարութիւն գործելը Օրէնքը գիտնալէն չի գար, այլ Աստուծոյ երկիւղէն:

անկումը եւ Տիրոջ հակառակ գործելը: Բայց այս վախճանէն պիտի փրկուի արդարը. անոր վերջը բարի պիտի ըլլայ, եւ ան «իր գործերուն պտուղը պիտի վայելէ»:

Երկրորդ ընթերցումը: Պօղոս առաքեալ կը մարգարէանայ, թէ Աստուած վերստին պիտի ընդունի Իրեն ընծայուած «ձիթենի»ին կոտրած ճիւղերը, այսինքն՝ պիտի վերընդունի Իրմէ հեռացած եբրայեցիները: Աստուած խիստ է հաւատքի մէջ կործանածներուն հանդէպ, եւ բարի է անոնց հանդէպ, որոնք կը շարունակեն բարի մնալ: Եւ այսպէս է ան՝ բոլոր մարդոց պարագային, անխտիր:

Երրորդ ընթերցումը: Հինգ հազարի կերակրումին կը վերաբերի:

Ի՞նչ է այս երեք հատուածներուն կապը:

Աստուած երեք մարդիկը «անօթի» չ'արձակեք: Այսինքն՝ չի ձգեք, որ անոնք իրենց գլխուն հարին նային: Աստուած չի լքեր մարդիկը, այլ մարդիկ իրենք է, որ կը հրաժարին Անկէ: Աստուած անտարբեր չէ, կատարելապէս հոգ կը տանի: Բայց իր հոգատարութեան դիմաց՝ կ'ակնկալէ մարդուն բարի ընթացքը: Բարի ընթացք՝ բարիով կը վերջանայ:

ՀՈՒՐ
ԳՔ



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ Ներողութիւն

Հարցում. Թէեւ Աստուած կը ներէ մեղքերս, ինչո՞ւ կը դժուարանամ ինքզինքիս ներելու:

Պատասխան. Շատ յաճախ, այլազան պատճառներով խիստ ենք մեր անձերուն նկատմամբ:

Յիսուս ըսաւ. «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ, ամբողջ մտքովդ եւ ամբողջ զօրութեամբդ» եւ «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս» (Մր 12.30-31): Ասոնք Յիսուսի ներկայացուցած եռախաւ երկու կարեւորագոյն պատուիրաններն են որ պէտք է պահենք մեր հոգեւոր ճանապարհին: Եռախաւ՝ որովհետեւ պէտք է սիրենք.

1. գԱստուած
2. մեր ընկերը
3. մեր անձը:

Պէտք է սակայն յիշել որ անձը սիրել չի նշանակէր ժխտական իմաստով անձնասէր ըլլալ: Այլ՝ թէ մենք մեր անձերը սիրելու ենք այնպէս ինչպէս Աստուած Իր սիրով կը վերականգնէ մեր անձերուն հիմնական արժէքը: Աստուծոյ, ընկերոջ եւ անձին սէրերը զիրար ամբողջացնող երեք ուղղահայեաց սէրեր են: Կարելի չէ գԱստուած սիրել երբ չենք սիրեր մեր ընկերն ու անձը: Կարելի չէ ամբողջապէս սիրել մեր ընկերն ու անձը եթէ գԱստուած չենք սիրեր: Եւ յատկապէս կարող չենք սիրել գԱստուած եւ մեր ընկերը եթէ կը տապալկինք ինքնամեղադրանքի ցեխին մէջ, եթէ չենք սիրեր մենք զմեզ եւ մանաւանդ եթէ մենք մեզի չենք ներեր՝ հակառակ անոր որ Աստուած կը ներէ: Այո, արժանի ենք Աստուծոյ սիրոյն եւ ինչու չէ նաեւ՝ մեր անձերու սիրոյն: ԶԱստուած եւ անձը սիրելու, եւ ինքզինքին ներելու անկարողութիւնը ցոյց կու տայ ներքին բաժանում մը անձին մէջ, եւ այն՝ թէ անձին մէկ մասը կը մերժէ ընդունիլ իր միւս մասը: Բայց ներողութիւնը սահմանուած է վերահաստատելու անձի միութիւնն ու ներդաշնակութիւնը:

Աստուծոյ դէմ մեղանշելով միեւնոյն ատեն կը մեղանշենք ընկերութեան եւ մեր անձերուն դէմ: Մեղանշել կ'ենթադրէ առնել կամ գողնալ մեզմէ (Աստուծմէ եւ ընկերութենէն ընդհանրապէս) եւ վատնել այդ առնուածը, իսկ ներել կը նշանակէ ետ տալ կամ վերադարձնել այն ինչ որ մեզի (Աստուծոյ եւ ընկերութեան) կը պատկանի: Ուրեմն ներողութիւնը հակադրուելով առնելուն՝ տուող արարք մըն է: Զախողելով այս արարքի գործադրութեան մէջ, կը ժխտենք Աստուծոյ աչքին մեր ունեցած արժէքը՝ մեր ներքին մշտահոս աղբիւրը եւ Աստուծոյ դուստրերու ու որդիներու արժանավայել մեր վերականգնեալ վիճակը:

Ներել չի նշանակէր մոռնալ: Ներել կը նշանակէ յիշել առանց դատապարտելու...

Ներել չի նշանակէր մոռնալ: Ներել կը նշանակէ յիշել առանց դատապարտելու՝ նոյն սխալը չկրկնելու առիթը կանխելու նպատակով:

Ինքզինքին չներելու պատճառներէն մէկը հպարտութիւնը կրնայ ըլլալ: Այս պարագային պէտք է ինքզինքին հարցնել. «եթէ Աստուած ներած է ինձի, ո՞վ եմ ես որ ինքզինքիս չեմ ներեր»:

Կ.Ն.

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

ՅՈՎԱՆԱԷՍ ՄԿՐՏԻՅԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆ:

«Այդ օրերուն Յովհաննէս Մկրտիչ սկսաւ քարոզել Հրէաստանի անապատին մէջ, ըսելով.՝ Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է:

Այս Յովհաննէսն էր այն անձը, որուն համար Եսայի մարգարէ խօսեր էր, ըսելով.՝

«Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ.

Տիրոջ ճամբան պատրաստեցէք,

հարթեցէ՛ք անոր շաւիղները»:

Յովհաննէս ուղտի մազէ շինուած հագուստ մը ունէր եւ մէջքին՝ կաշիէ գօտի: Իր կերակուրը մարախ եւ վայրի մեղր էր: Երուսաղէմէն, ամբողջ Հրէաստանէն եւ Յորդանան գետի բոլոր շրջաններէն մարդիկ իրեն կ'երթային եւ իրենց մեղքերը խոստովանելով, անոր ձեռքով կը մկրտուէին Յորդանան գետին մէջ:

Երբ Յովհաննէս տեսաւ շատ մը Սաղուկեցիներ եւ Փարիսեցիներ, որոնք իրմէ մկրտուելու եկած էին, ըսաւ անոնց.՝ Ի՞նչու ձեռքով ըսաւ ձեզի թէ կրնաք Աստուծոյ տալիք պատիժէն փախչիլ» (3.1-7):

Մատթէոս աւետարանիչ Յովսէփի իր ընտանիքին հետ Նագարէթ հաստատուելու դրուագէն ետք, «այդ օրերուն» բացատրութեամբ անցած է Յովհաննէս Մկրտիչի առաքելութեան նկարագրութեան: Քսանութ կամ քսանեօթ տարիներու ոստում մըն է կատարուածը: Կենթադրուի, որ Յիսուսի գործունէութենէն քիչ առաջ Մկրտիչ իր քարոզչութեան սկսած էր:

Քրիստոնեայ առաջին համայնքներուն համար ընդհանրապէս, Աւետարանին մեկնակէտը Յովհաննէս Մկրտիչի առաքելութիւնն էր, ինչպէս Մարկոսի սկզբնաւորութիւնը, Յովհաննէսի 1.6-7-ը, 15-ը, 19-34-ը, եւ Առաքեալներուն Գործերը գիրքին 1.22-ը կը թելադրեն: Այս ընկալումը Մատթէոսի ոստումին մէջ շատ յստակ է:

Առաջին դարու քրիստոնէութիւնը շատ հետաքրքրուած էր Յիսուսի մանկութեամբ եւ վաղ երիտասարդութեամբ: Ետքը՝ Յիսուսի մանկութեան շուրջ պարականոն գրականութիւն պիտի ծնէր:

Ղուկասէն գիտենք, թէ պատանի Յիսուս «կը զարգանար իմաստութեամբ եւ (կ'աճէր) մարմնով» (Ղկ 2.52):

Յովհաննէս Մկրտիչ իր քարոզչութեան սկսած էր «Հրէաստանի անապատ» կոչուած այն շրջանին մէջ, որ Երուսաղէմի արեւելքէն մինչեւ

Մեռեալ ծով կ'երկարէր: Այն «անապատը» խոպան եւ ամառի տարածութիւն մըն էր, ուր քիչ եւ ցրուեալ բնակիչներ կ'ապրէին:

Յովհաննէս Մկրտիչի քարոզչութեան գլխաւոր նիւթն էր ապաշխարութիւնը: Ան բարձրադասակ կը յայտարարէր. «Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի արքայութիւնը մօտեցած է»:

Անոր կոչը հոգեւորապէս պատրաստուելու համար էր: Պատրաստ ըլլալ պէտք էր եւ պէտք է դիմաւորելու համար երկինքի թագաւորութիւնը եւ անոր թագաւորը՝ զՔրիստոս: Երկինքի թագաւորութիւնը հոգեւոր իրականութիւնն է: Ուստի այդ իրականութիւնը ընդունելու ճամբան ապաշխարութիւնն էր եւ է: Ապաշխարութեամբ՝

Ապաշխարութեամբ՝
Աստուծոյ դարձած
հոգին եւ միտքը
պատրաստ կ'ըլլան
ընդունելու
Քրիստոս
թագաւորը:

Աստուծոյ դարձած հոգին եւ միտքը պատրաստ կ'ըլլան ընդունելու Քրիստոս թագաւորը:

«Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ.՝ Տիրոջ ճամբան պատրաստեցէք, հարթեցէ՛ք անոր շաւիղները»:

Իր անմիջական շրջագիծին մէջ ի՞նչ կ'ըսէ այս մէջբերումը: Անիկա Բաբելոն գերի տարուած ժողովուրդին ուղղուած է. յոյս կը ներշնչէ՝ թէ Տէրն Աստուած իր զօրութեամբ պիտի գայ (Ես 40.10) եւ Անոր «փառքը պիտի յայտնուի» (Նոյն, հմր 5): Գերեալ ժողովուրդին կեանքը պիտի վերականգնի Տիրոջ հովանիին ներքեւ (Նոյն, հմր 10): Ան «հովուի պէս իր հօտը պիտի հովուէ»

(Նոյն, հմր 11): Արդ, պէտք է պատրաստուիլ:

Անապատը իբր անպատրաստ տարածութիւն՝ խորհրդանշանն է անպատրաստ ժողովուրդին: Ուրեմն, ըսուածը այն է, թէ Յովհաննէս Մկրտիչ իր քարոզչութիւնը կը կատարէ անպատրաստ ժողովուրդին մէջ: «Աղաղակողին ձայնը», կ'ըսէ, որովհետեւ Իսրայէլի ժողովուրդին հոգիի ականջները գոցուած էին: Մկրտիչ կ'աղաղակէ, որպէսզի անպատրաստ ժողովուրդը արթննայ եւ իր հոգին ապաշխարութեամբ պատրաստէ՝ ընդունելու համար Տիրոջ փառաւոր յայտնութիւնը:

«Տիրոջ ճամբան» կը նշանակէ Անոր փրկութեան գործը: Եւ նկատի ունենալով, որ Եսայի մարգարէի խօսքը մեկնաբանուած է որպէս Յովհաննէս Մկրտիչի անձին եւ առաքելութեան համար ըսուած, հետեւաբար՝ Տէրը՝ Յիսուս ինքն է:

4-րդ համարը մեզի կը նկարագրէ Մկրտիչի



արտաքինը, թէ ի՞նչ կը հագնէր: Արդեօք ինչո՞ւ համար է ասիկա: Աւետարանիչներէն ոեւէ մէկը Յիսուսի հագածին մասին ակնարկութիւն չունի: Մինչդեռ երեք համատեսական աւետարաններուն մէջ Յովհաննէս Մկրտիչի հագածին մասին գրուած է:

Դ. ԹՊ 1.8-էն կ'իմանանք, թէ Եղիա մարգարէ «մազոտ մարդ մըն էր եւ մէջքին մաշկեղէն գօտի մը» ունէր: Այս համարով ըսուածը՝ մարգարէին շատ մազ ունենալուն չի վերաբերիր, այլ թէ՛ ան քուրճ կը հագնէր եւ մէջքին՝ գօտի ունէր: Երբ աւետարանիչները Յովհաննէս Մկրտիչի հագածին մասին կը խօսին՝ լուերեայն մեկնաբանութիւն կը կատարեն. գայն կը նմանցնեն Եղիա մարգարէին: Այս նմանցման առնչութեամբ՝

Յիսուս ըսած է. «եթէ կ'ուզէք ընդունիլ՝ Յովհաննէսն է Եղիան, որ պիտի գար» (Մտ 11.14):

Այլակերպութեան գրուագին մէջ եւս նոյն մեկնաբանութիւնն է. «Եւ մինչ լեռնէն վար կ'իջնէին, Յիսուս պատուիրեց անոնց, ըսելով.՝ Մինչեւ որ Մարդու Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր տեսածը ոեւէ մէկուն մի՛ պատմէք:

Այն ատեն աշակերտները հարցուցին Յիսուսի.՝ Հապա ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ'ըսեն, թէ նախ Եղիան պէտք է գայ:

Յիսուս պատասխանեց.՝ Ճիշդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ ամէն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ եկած է, սակայն մարդիկ գայն չճանչցան եւ անոր հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ:

Այն ատեն աշակերտները հասկցան, թէ Յովհաննէս Մկրտիչի մասին կը խօսէր» (Մտ 17.9-13):

Զգոյշ պէտք է ըլլալ, եւ «Յովհաննէսն է Եղիան» հաստատումին մէջ վերամարմնաւորութեան (reincarnation) գաղափարը չտեսնել: Յիսուսի ըսածը եւ աշակերտներուն հասկցածը այն էր, որ Յովհաննէս Մկրտիչ Եղիայ մարգարէի ոգին եւ նախանձախնդրութիւնը ունէր: Ինչպէս Եղիա մարգարէ Աստուծոյ անուան, Անոր պաշտամունքին եւ մանաւանդ Անոր տուած օրէնքներուն նկատմամբ նախանձախնդիր եղաւ, նոյնպէս եղաւ Յովհաննէս Մկրտիչ: Երկուքն ալ քաջութեան օրինակներ եղան եւ երկուքն ալ ժողովուրդին սիրտը դէպի Աստուած դարձնելու համար հրապարակ իջան:

Ուստի, աւետարանիչներուն կողմէ Յովհաննէս Մկրտիչի հագուստին ակնարկութեան միտք բանին՝ Եղիա մարգարէին հետ նմանութիւնը ցոյց տալ եղած է:

Ինչպիսի՞ մկրտութիւն մըն է, որ ան կը շնորհէր: Զուրի մկրտութիւն: Ապաշխարութեան նշան էր անիկա: Անիկա խորհրդանշական արարք մըն էր եւ կ'արտայայտէր մկրտուելու եկողին բարոյական

եւ հոգեւոր մաքրումը: Այդ պատճառով ալ, նախքան մկրտութիւնը՝ ենթական պէտք է իր մեղքերը խոստովանէր:

Ինչպէս աւետարանը կ'ըսէ, Յովհաննէս Մկրտիչի քարոզութեան գլխաւոր նիւթն էր ապաշխարութիւնը: Եւ ան ապաշխարելու կոչ կ'ուղղէր, որովհետեւ Երկինքի արքայութիւնը մօտեցած է, կ'ըսէր:

7-10 համարները կը յայտնեն, թէ ան որքա՞ն բուռն կեցուածք ունէր սաղուկեցիներուն եւ փարիսեցիներուն հանդէպ: Զանոնք «իժերուծնունդներ» կը կոչէր: Յովհաննէս Մկրտիչի խօսքը ուղղուած հրեայ կրօնական դեկավարութեան՝ բարկութիւն կ'արտայայտէ: Այս բարկութիւնը շատ ծանօթ կամ սովորական երեւոյթը չէ: Ասիկա վախճանաբանական բարկութիւնն է, այլ խօսքով՝ շուտով հասնող Դատաստանին բարկութիւնը: Այս բարկութիւնը՝ որովհետեւ Յովհաննէս Մկրտիչ ըսել կ'ուզէր, թէ Աստուած շատ շուտ իր Դատաստանով կու գայ:

Այս բարկութիւնը բոլոր անոնց համար է, որոնք Աստուծոյ կամքին համար չեն ապրիր: Դատաստանին շուտափոյթ հասնիլը իրակա՞ն էր, թէ խաբէութիւն կամ կեղծիք: Յիսուս ըսած էր թէ՛ «ո՛չ ոք գիտէ թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, բայց միայն Հայրը» (Մտ 24.36): Այսուհանդերձ առաքեալները իրենց քարոզութեան մէջ շարունակեցին Տիրոջ շուտով գալը յայտարարել: Անոնք եկեղեցիներուն ուզեցին փոխանցել Տիրոջ վերահաս գալուստը: Ինչո՞ւ: Արդեօք կամաւոր կերպով սխա՞լը կը տարածէին, կամաւոր սուտ մըն է, որ կը խօսէին:

Ներկայ ժամանակներուն ալ Եկեղեցին կը շարունակէ նոյնը յայտարարել:

Կարգ մը մեկնիչներ կը կարծեն, թէ առաքեալները թիւրիմացութեան մէջ էին: Բայց արդեօք թիւրիմացութեան մէջ էին: Թէեւ Յիսուս ըսած էր, թէ ո՛չ ոք գիտէ, նոյնիսկ Որդին, բայց նոյն ատեն յայտնած էր, թէ Երկինքի թագաւորութիւնը շուտով՝ գողի մը պէս պիտի գայ (Մտ 24.42-43): Հետեւաբար, ինչպէս գողի հասնելուն ժամը կամ վայրկեանը մարդ չի գիտեր, եւ, ուրեմն, պէտք է արթուն ըլլայ, այսինքն՝ մնայուն կերպով պատրաստ: Ասիկա հիմնական ճշմարտութիւն մը կ'ըսէ մեր կեանքին մասին:

Թէ Աստուծոյ յաւիտենականութիւնը սահման չի ճանչնար՝ ատիկա որոշ է, բայց նոյնքան եւ աւելի որոշ է մեզի համար այն իրողութիւնը, որ հողեղէն մարդուն կեանքը սահման ունի եւ այդ սահմանին

Յովհաննէս
Մկրտիչի
ֆարոգութեան
գլխաւոր նիւթն էր
ապաշխարութիւնը:

մէջ Երկինքի թագաւորութեան ճանաչումը եւ դէպի այդ թագաւորութիւն դարձը անհրաժեշտ են ապահովելու համար անհատին փրկութիւնը: Եթէ երբեք անհատը իր ներկայ կեանքին մէջ

Երկինքի թագաւորութեան նախապայմանները եւ դէպի այդ թագաւորութիւն դարձը անհրաժեշտ են ապահովելու համար անհատին փրկութիւնը:

զգառնայ, եւ Երկինքի արքայութիւնը ընդունելու պատրաստ չըլլայ, ի՞նչ օգուտ թէ ե՞րբ է եկեր անհիկա: Կարեւորը իւրաքանչիւր անհատի համար տեղ մը ունենալն է անոր մէջ, արքայութեան ժառանգութեան մէջ բաժին ունենալն է կարեւորը:

Այս տրամաբանութեամբ է, որ մնայուն կերպով ահագանգը կը հնչեցուի եւ Տիրոջ գալուստին մօտիկ ըլլալը մարդ անհատին կը յիշեցուի:

Իսկ թէ ինչո՞ւ կ'ուշանայ Երկինքի արքայութեան վախճանական հաստատուիլը:

Ոչ թէ միայն ներկայիս, այլեւ անցեալին՝ առաքելական ժամանակներուն ալ շատեր կային, որ անհամբեր էին, եւ երբոր շուտով չեղաւ Տիրոջ գալուստը, սկսան դժգոհիլ: Պետրոս առաքեալ Տիրոջ օրուան մասին հետեւեալը ըսած է. «Սա՛ եւս մի՛ մոռնաք, սիրելիներ, որ Տիրոջ քով մէկ օրը հազար տարուան պէս է եւ հազար տարին՝ մէկ օրուան պէս: Տէրը չ'ուշացներ իր խոստումին կատարումը, այնպէս՝ ինչպէս ոմանք կը հասկնան ուշացումը: Տէրը պարզապէս համբերատարութիւն ցոյց կու տայ ձեզի հանդէպ, որովհետեւ չ'ուզեր որ ոեւէ մէկը կորսուի, այլ կ'ուզէ որ բոլորն ալ ապաշխարելու առիթ ունենան:

Բայց Տիրոջ օրը անակնկալօրէն պիտի գայ, գողի պէս, երբ երկինքը մեծ շառաչիւնով պիտի չքանայ, երկնային մարմինները պիտի վառին ու հալին, եւ երկիրը իր ամբողջ բովանդակութեամբ պիտի անհետանայ» (Բ. Պտ 3.8-10):

Եբրայեցիներու նամակին հեղինակը անցեալին «իրենց հաւատքով վկայուած» անձերուն կամ հաւատքի ախոյեաններուն մասին խօսելով, ըսած է թէ՛ Տէրը անոնց չէ հատուցած, որովհետեւ չէ ուզած որ «անոնք խոստումին իրականացման հասնին» առանց Քրիստոսի նոր ժամանակներու հաւատաւորներուն (հմտ Եբր 11.39-40): Աստուած առիթ կու տայ, որ փրկուողներու թիւը աճի:

Ճիշդ մինչեւ այսօր կը հարցուի, թէ արդեօք Աստուծոյ համբերատարութիւնը պատճառ չ'ըլլար, որ մարդիկ մեղանչելու մէջ շարունակեն մնալ, ըսելով՝ քանի գալուստը մօտիկ չէ, պատիժն ալ անմիջական պիտի չ'ըլլայ, ուրեմն մենք մեր

կեանքը վայելելու նայինք: Թէեւ ուրիշներ ալ կ'ըլլան, որ աւելի զգաստանան: Նոյն է պարագան մարդկային պարզ յարաբերութեան մէջ ալ: Մարդ կայ, որ իրեն հանդէպ ցուցաբերուած ներողամտութիւնը կը հասկնայ իբր տկարութեան նշան, եւ կը շփանայ ու նոր յանցանքներ կը գործէ: Ուրիշ մը կրնայ ըլլալ՝ որ աւելի կը զգաստանայ եւ իր յանցանքները կը նուազեցնէ:

Մարդ կայ, որ իրեն հանդէպ ցուցաբերուած ներողամտութիւնը կը հասկնայ իբր տկարութեան նշան, եւ կը շփանայ...

Սաղուկեցիներուն եւ փարիսեցիներուն «Իժերու ծնունդներ», կ'ըսէ:

Որո՞նք էին սաղուկեցիները: Կրօնական խմբակցութիւններ, որ սկսած էր Մակաբայեցիներու ժամանակ, այսինքն՝ Ն. Ք. 2-րդ դարուն: Յ. Ք. 70 թուականին՝ Տաճարի կործանումին հետ կը վերջանար անոնց օրը: Պահպանողական ուղղութիւն ունէր եւ գլխաւորաբար քահանաներէ կը բաղկանար: Սաղուկեցիները փարիսեցիներէն կը տարբերէին թէ՛ կրօնական հաւատալիքներու մէջ, քանի որ միայն Օրէնքի հինգ գիրքերը կ'ընդունէին իբր կանոնական, եւ չէին հաւատար հրեշտակներու, հոգիի անմահութեան ու մեռելներու յարութեան (տե՛ս Ա. Գ. 23.8), եւ թէ՛ քաղաքական համոզումներով, որովհետեւ աւելի հակամէտ էին գործակցելու տիրող իշխանութեան՝ հռոմէացիներուն հետ:

Իսկ որո՞նք էին փարիսեցիները: Ն. Ք. 2-րդ դարէն սկսեալ, հրեայ կեանքին մէջ ընկերային-կրօնական խմբակցութիւն մը որ կը հաւատար՝ թէ Օրէնքին տառացի գործադրութեամբ միայն կարելի է փրկութիւն ապահովել, եւ ըստ այնմ ալ կը պահանջէին խստիւ պահել Օրէնքը եւ անոր շուրջ զարգացած «հայրերու աւանդութիւն»ը (Մկ 7.13): Փարիսեցիները դէմ էին հռոմէական իշխանութեան, եւ անհիկա իրենց տրուած աստուածային պատիժ կը համարէին: Յ. Ք. 70 թուականին Տաճարի կործանումէն ետք՝ փարիսեցիութիւնը ռաբբիական շարժումի պիտի փոխուէր եւ պիտի ըլլար միակ հոգեւոր առաջնորդութիւնը հրեայ ժողովուրդին:

Ինչպէ՞ս հասկնալ արտայայտութիւնը:

Ինչպէ՞ս հասկնալ բարկութեան արտայայտութիւնը: Պատասխանը յաջորդիւ:

(Շարունակելի 7)

Յնձորի շաբաթի Ժամանակացույց

Յինգշաբթի, 26 Յունիս 2008

11.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Շաբաթ, 28 Յունիս 2008

18.30 > Ս. Գրային սերտողութիւն՝

Յայ երիտասարդներուն համար

Կիրակի, 29 Յունիս 2008

Վարդավառ. Տօն Պայծառակերպութեան
Յիսուսի Զրիստոսի

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

ՀԻՒԱՌՆԵՐՈՒ ԱՅԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանին.

514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւիմ:

Սոյն թերթիչը ե-նամակով ստանալու
չաւար Ձեր ե-ՀԱՍՅԷՆ ռոյրարկեժէք
eglise58@sourphagop.com-ին

ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՂԱՅԻՆՆԵՐՆ ԼՈՒՍՈՒ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ

ԲՁՅ Է

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՒՆ ՈՒՐԲԱԾ

ԺՈՒՆ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԻԼ ԶԱՐՏՈՒՄԱՐԻՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻՒՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵԼ ԼԵՏԵԻՆՎ Ե-ՀԱՍՅԷՐԻՆ՝

eglise58@sourphagop.com



Վարդավառի Տօնին առիթով
Կիրակի, 29 Յունիս 2008-ին

Վարդ Սը Բեր Եկեղեցի

Սոյն առիթով
Կը Պատարագ Եւ Կը Բարոճէ

Գերշ. Տ. ՍՈՒԲԷՆ Ս.

Արք. Գաթարոյեան

(Հոգեւոր Տեսուիք)

ՍԿՐՁԻ Ս. Պատարագի ԺՈՒՆ 11.00